Australian Government

COVID-19 VACCINATION

COVID-19-ի դեմ պատվաստանյութի չորրորդ դեղաչափ

8 հուլիսի, 2022թ.

Ձմռանը հաճախ ավելի շատ վարակներ են լինում շնչառական վիրուսներից, ինչպիսին է COVID-19-ը: COVID-19-ից առավելագույն պաշտպանություն ապահովելու համար, COVID-19-ի դեմ պատվաստանյութի լրացուցիչ խթանիչ կամ չորրորդ դեղաչափ է առաջարկվում COVID-19-ից ծանր հիվանդանալու ավելի բարձր վտանգ ունեցող մարդկանց համար: Սա կլինի COVID-19-ի դեմ պատվաստանյութի հինգերորդ դեղաչափը այն մարդկանց համար, ովքեր ունեն խիստ իմունային անբավարարություն:

Դուք պետք է ստանաք COVID-19-ի դեմ պատվաստանյութի չորրորդ դեղաչափը, եթե դուք.

- 50 կամ ավելի բարձր տարիքի եք
- տարեցների խնամքի կամ հաշմանդամության խնամքի հաստատության բնակիչ եք

Լրացուցիչ խթանիչ է առաջարկվում 16 և ավելի բարձր տարիքի մարդկանց համար, ովքեր.

- ունեք իմունային անբավարարություն
- ունեք կամ վերապրել եք որոշակի քաղցկեղ
- ունեք աուտոիմունային հիվանդություն, որը պահանջում է բուժում
- ունեք քրոնիկական կամ ծանր հիվանդություն, որն ազդում է ձեր թոքերի, լյարդի, երիկամների, ուղեղի կամ սրտի վրա
- ունեք շաքարախտ, որը պահանջում է դեղորայքի ընդունում
- ունեք հաշմանդամություն՝ լուրջ կամ բարդ առողջական կարիքներով
- ունեք խիստ ավելորդ քաշ կամ թերքաշություն:

30-ից 49 տարեկան մարդիկ նույնպես կարող են չորրորդ դեղաչափը ստանալ, եթե ցանկանում են:

Խոսեք ձեր բժշկի հետ, եթե վստահ չեք, թե արդյոք պետք է ստանաք չորրորդ դեղաչափը:

Դուք կարող եք ստանալ COVID-19-ի դեմ պատվաստանյութի ձեր չորրորդ դեղաչափը, եթե անցել է առնվազն **3 ամիս** ձեր խթանիչ դեղաչափից:

Դուք կարող եք ստանալ COVID-19-ի դեմ ձեր պատվաստումը գրիպի դեմ պատվաստման հետ միաժամանակ:

Եթե ձեր COVID-19-ի թեստը վերջերս դրական է եղել, խորհուրդ է տրվում սպասել **3 ամիս**՝ նախքան COVID-19-ի դեմ ձեր հաջորդ պատվաստանյութի դեղաչափը ստանալը:

Հավելյալ տեղեկատվության համար, այցելեք www.health.gov.au կամ զանգահարեք National Coronavirus Helpline 1800 020 080 հեռախոսահամարով: Ընտրեք տարբերակ 8 անվճար թարգմանչական ծառայությունների համար,: